










THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARIES
1817



ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԿՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՈՒՑ

Ի ՆԻԿՈՂՈՍԷ ՀՈՎՈՒԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Սիւնպիւլլի խան. թիւ 47.

1880

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԿՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՈՒՑ

Ի ՆԻԿՈՂՈՍԷ ՀՕՎՈՒԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Սիւնպիւլի խան. թիւ. 47.

1880



Grant

CREA[illegible]

4o4

BU[illegible]?

ԱԶԴ

Մեր Բագրատունեաց թագաւորութեան Մայրաքաղաքն Անի՝ յետ անկմանն և դարաւոր ամայութեան, այժմ այնպիսի վիճակի մը ենթարկեալ է որ այն կողմերը այցելող հնախոյզ ճանապարհորդք որք մինչեւ ցարդ առ ա՛ի բանաւոր և անբան գազանաց հազիւ ուրեմն կրնային հետազօտել զայն, այսուհետեւ ընդարձակ ասպարէզ և դիւրութիւն ունին նորա աւերակները խուզարկելու, հաւաքելու և ՚ի լոյս ածելու անոր յիշատակարանները. ուստի այս տետրս որ նոյն քաղաքի երկու ծածկագիր յիշատակարանաց բացատրութիւնն է և 1853 ին հրատարակուած և սպառած է, և այժմու նոր գրագիտաց շատերուն անմատչելի է եղած, կրկին անգամ տպագրելու ձեռնարկեցինք խիստ սակաւաթիւ օրինակ, որպէս՝ հանրութեան և ամեն գրագիտաց ուշադրութեանն արժանի գործ, արդիւնք բարեյիշատակ Նիկողայոսի Չոփուեան, որպէս զի այն կողմերը ճանապարհորդող և մեր երբեմն բարգաւաճ Մայրաքաղաքին հնութիւնները խուզարկող ազգայինք կարենան նորա յիշատակարաններուն սոյն ծածկաբանութեանց տեղեկանալ, և եթէ երբէք պատահին այսպիսի արձագրութեանց, ինչպէս որ յուսալի է, ըստ այնմ փորձեն զանոնք վերծանել: Եւ եթէ այս բացատրութիւններն ոմանց անկատար են համարուին, գոնէ աւելի գոհացուցիչ լուծման մը կրնան առաջնորդել: Յետոյս վերջն յաւելցուցինք նաև ուրիշ երկու ծածկագրութեանց օրինակներ, և համառօտ դիտողութիւն մը:


ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՂԱԾ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԸ

ԼՈՒՍԱՄՏԻՆ ՎՐԱՅԻ ԳՐԵՐՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Կարս քաղաքին Առաջնորդ Արժանապատիւ Կարապետ վարդապետը 1847ին Անի քաղաքի աւերակներուն մէջ եկեղեցւոյ մը լուսամտին բոլորտիքը՝ քսանուչորս տառերէ բաղկացած՝ ծածկաբանութեան պատկեր մը գտաւ, որ շատ սքանչելի հանճարով շինուած է. և ո՛վ գիտէ մեր ազգային ճանապարհորդներէն քանի մարդ տեսեր՝ ու բան մը չհասկնալով անհոգութեամբ թողեր գացեր են։ Բայց այս Արժանապատիւ անձին շնորհակալ ըլլալու եմք, վասն զի մեր նախնեաց հանճարոյն յարգը լաւ ճանչնալով՝ 849 տարիէ 'ի վեր մոռացութեան խաւարին մէջ թաղուած այս հնութեան մնացորդը օրինակեց՝ ու 146 թիւ Հայաստան լրագրոյն միջոցաւ հրատարակեց. որոյ իմաստին բացատրութեանը համար ալ կը խնդրէր՝ որ եթէ բանասէր մը իւր աշխատութեանը արժանի համարի ու բացատրէ՝ հրատարակել տայ։ Ահա նոյն պատկերին ձեւը հոս դնելով կը բացատրեմք։

ՆԻԿՈՂՈՍ ՀՈՎՈՒԵԱՆ



Այս պատկերին մէջէն Ա. Գ. Բ. Թ. Հ. Ց. Ց. Ս. Հ.... Ց. այս տասը տառերը՝ եղելիք իմաստին սկզբնատառերն են. և եօթն տառեր ալ կան՝ որոնցմով ամբողջ (ԳՐԻԳՈՐԻ) անունը կը բաղկանայ. և Շ. Ց. Մ. այս երեք տառերն ալ՝ փրկչին հազարերորդ թուականը կը ցուցնեն, (Շ=500+Ց=300+Մ=200=1000), որով առաջին իմաստը կ'ելլէ, ու Ց. Ո. Ո. Ո. այս չորս տառերն ալ կ'աւելնան:

ԻՄԱՍՏ Ա.

Առաջին Գագիկ Բագրատունի Թագաւոր Հայոց Ցօրինեաց Ցանուն Սրբոյ Հայրապետին ԳՐԻԳՈՐԻ, Ցամի 1000.

Ծանօթ. Պատկերին մէջի սպիտակ բոլորակը՝ լուսամուտն է:

Այս իմաստին ստուգութեանը մեր Ազգային պատմիչները կը վկայեն.

« Ջմեծաշէն եկեղեցին որ 'ի Քարուգաշտի՝ անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ, կամեցաւ (Գագիկ) նոյնաձեւ չափով և յօրինուածով յարդարել 'ի քաղաքն Անւոյ, հիմնարկեալ 'ի կուսէ Ծաղկոցաձորոյն 'ի բարձրաւանդակ տեղւոջն տարփատենչ տեսողացն. (զոր) մեծատաշ վիմօրդեան կոփածու վիմօք մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուսանցոյց պատուհանովք, երրակի դրամբք, սքանչատես տեսմամբ գմբեթաւորեալ, գունակ գերամբարձ և երկնանման գնտին »: (Ասողիկ. Գ. 47: Տե՛ս և 'ի Հին Հայաստ. երես 421:)

« Սուրբ Գրիգորն գերահռչակ՝ զոր նախ սկիզբն առնու 'ի շինել Թագաւորն Գագիկ 'ի յԱնի, 'ի վերայ Ծաղկոցաձորոյն վայրիւք, դաղափար առեալ զլուսազարդ զհրաշալի զսուրբ Գրիգորն՝ զշինեալն 'ի Ներսիսէ Հայրապետէ. և կատարեաց զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի, 'ի հազարերորդի ամի մարմնանալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: (Սամուէլ Երէց. Տե՛ս 'ի Հին Հայաստ. երես 422:)

« Սոյնպէս և արքայն Գագիկ յետ ամաց ինչ շինեաց 'ի յԱնի քաղաք եկեղեցի մեծ և ահեղ՝ լուսազարդ և հրաշալի յամի Տեառն 1000, և 'ի Թուին Հայոց՝ ՆԽԹ, յանուն սրբոյն Գրիգորի »: (Հ. Մէք. Վ. Ջամչեան. 'ի Պատմ. Հայոց. հատ. Բ. եր. 872:)

Արդ կը մնայ աւելցած (Ց· Ո· Ո· Ո) չորս տառերէն իմաստ հանել · ուստի ասիկայ ընելու համար՝ նախ պէտք է գիտնալ որ ծածկագրանութեան հեղինակը՝ երկու եղանակաւ իւր միտքը հասկցուցեր է · առաջինը ելլելու իմաստին սկզբնատառերը առնելով, ինչպէս որ վերը տեսանք, և երկրորդը՝ տառերը համրանքի փոխելով ։ Արդէն յայանի է մեր հայկական տառերուն թուանշանի կարողութիւն ունենալնին · բայց նախնիք՝ այս ալ երկու եղանակաւ բանեցուցեր են · առաջին եղանակը ինչպէս որ մինչեւ ցարդ կը գործածեմք, վերէն դէպ 'ի վար ուղղահայեաց դիմողութեամբ իջնելով՝ Այէն մինչեւ Թօն միաւոր, մէկզմէկէ մէկմէկ թիւ աւելցընելով · Ժէն մինչեւ Ղատը տասնաւոր, մէկզմէկէ տասնական թիւ աւելցընելով · Ճէն մինչեւ Ջէն հարիւրաւոր, մէկզմէկէ հարիւրական թիւ աւելցընելով · Ռէն մինչեւ Քէն հազարաւոր, մէկզմէկէ հազարական թիւ աւելցընելով ։ Եւ երկրորդ եղանակը՝ հորիզոնական դիմողութեամբ՝ ձախէն դէպ 'ի աջը գալով հաշուեր են · Ա Ժ Ճ Ռ մէկմէկ · Բ Ի Մ Ս երկուքական · Գ Լ Յ Վ երեքական · Դ Խ Ն Տ չորսական · Ե Ծ Շ Ր հնգական · Զ Կ Ո Ց վեցական · Է Հ Չ Ւ եօթնական · Ը Ձ Պ Փ ութնական · Թ Ղ Ջ Ք իննական · ըսել է որ մեր 36 տառերը այս դրութեամբ՝ պարզ միաւորի ուժով կը բանին, և 'ինը թիւէն անդին չեն անցնիր ։ Դիւրին հասկընալու համար հետեւեալ աղիւսակը դրինք ։

Գաւազանք.

	Ա Միաւորի	Բ Տասնաւորի	Գ Հարիւրաւորի	Դ Հազարաւորի	
Ա. կարգի չորս տառերը	Ա	Ժ	Ճ	Ռ	մէկ թուոյ ուժ ունին
Բ. կարգի չորս տառերը	Բ	Ի	Մ	Ս	երկու թուոյ ուժ ունին
Գ. կարգի չորս տառերը	Գ	Լ	Յ	Վ	երեք թուոյ ուժ ունին
Դ. կարգի չորս տառերը	Դ	Խ	Ն	Տ	չորս թուոյ ուժ ունին
Ե. կարգի չորս տառերը	Ե	Ծ	Շ	Ր	հինգ թուոյ ուժ ունին
Զ. կարգի չորս տառերը	Զ	Կ	Ո	Ց	վեց թուոյ ուժ ունին
Է. կարգի չորս տառերը	Է	Հ	Չ	Ւ	եօթն թուոյ ուժ ունին
Ը. կարգի չորս տառերը	Ը	Ձ	Պ	Փ	ութն թուոյ ուժ ունին
Թ. կարգի չորս տառերը	Թ	Ղ	Ջ	Ք	ինն թուոյ ուժ ունին
	Մէկմէկէ մէկմէկ թիւ ունին	Մէկմէկէ տասնական թիւ ունին	Մէկմէկէ հարիւրական թիւ ունին	Մէկմէկէ հազարական թիւ ունին	

Արդ այս երկրորդ դրութեամբ՝ առաջին իմաստին մէջէն աւելցած չորս տառերը եթէ հաշուեմք՝ գումարը 21 կ'ելլէ. ինչպէս,

Յ Ո Ո Ո
3 6 6 6 | 21

և պատկերին մէջի 24 տառերը ամենը մէկէն ժողովելով եթէ հաշուեմք՝ գումարը 97 կ'ելլէ. ինչպէս,

Հ Հ Ս Յ Յ Գ Ր Ր Ո Գ Թ Գ Ո Ո Բ Ո Յ Յ Ի Ի Շ Յ Մ
7 7 2 3 3 3 5 5 6 3 9 3 6 6 2 6 3 3 2 2 5 3 2 | 97

Արդ վերի 21 թիւը նշմար է այնպէս իմաստի մը՝ որոյ բառերը 21 տառերով բաղկանան, և այն իմաստը յայտնող նոյն տառերը եթէ համրանքի փոխեմք՝ պատկերին մէջի գրուած տառերու գումարին համահաւասար 97 թիւ ելլէ. և ահա մեր խնդրածը կը գտնեմք երկրորդ իմաստին մէջը.

ԻՄԱՍՏ Բ.

Ա Ի Գ Ն Ե Ա Յ Ի Ն Ջ Տ Է Ր Փ Ր Կ Ի Ջ Մ Ե Ր 21
1 7 3 4 5 1 6 2 4 8 4 7 5 8 5 6 2 7 2 5 5 | 97 գումար

Գագիկ Շահնշահը՝ այս Քարտուղաշտի եկեղեցին շիներ է յանուն սրբոյն Գրիգորի, 'ի յիշատակ այն մեծ յաղթութեանը, որ եղաւ իր վքը (յամի տեառն 998) Ատրպատականի Մամ-

լուն բռնաւորին դէմ, ուր Հայք և Վիրք՝ քսան հազար զօրքով՝ թշնամւոյն հարիւր հազար զօր-քէ բաղկացած ահեղ բանակին յաղթեցին, «Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր» կանչելով. և այս յաղթութեան այս աղօթքին օժանդակութեամբ ձեռք բերուելուն կը վկայէ Պատմութիւնը։

«Շփոթեալ (ասէ) Հայոց և Վրաց յարշա-ւանաց (թշնամւոյն), առին իւրաքանչիւր ըզ-զէնս իւրեանց և 'ի բաց եդեալ զերկիւղ՝ աղա-ղակեցին առ Աստուած և ասեն, «Օգնեա մեզ Աստ-ուած փրկիչ մեր». զայս ասացեալ՝ հեծան յերի-վարս իւրեանց, և առանց ճակատ յօրինելոյ՝ 'ի դիմի հարան թշնամեաց խառն 'ի խուռն. և զայրագին յարձակմամբ կոտորեցին զնոսա 'ի բերան սրոյ . . . . և գիտացին, եթէ զօրու-թեամբ Տեառն յաջողեցաւ նոցա այն գործ, վասնորոյ գոհանային զԱստուծոյ. մանաւանդ զի ոչ ոք 'ի նոցանէ անկաւ 'ի մարտի անդ, և ոչ իսկ ոք վիրաւորեցաւ»։ (Չամչ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 880)

Հեղինակը՝ ծածկարանութեան մէջ վերի իմաստները պարունակելէն յետոյ, Եկեղեցւոյն շինութեան ժամանակին վերաբերեալ կարեւոր պարագայներն ալ առանց յիշատակի չէ թողու-ցեր. զոր օրինակ՝ Եկեղեցւոյն շինութեանը ժա-մանակակից Հայրապետին անունը, Եկեղեցին շինել տուող թագաւորին հօրը և թագուհւոյն և զաւակացը անունները, Եկեղեցին շինող ճար-տարապետին անունը, այն ժամանակի մեր փա-ռաւոր ու աշխարհահռչակ իշխաններին և բազմա-

վաստակ ու որքասէր վարդապետներէն ոմանց անունները, իւր անունը, եւն., եւն. եւ այս իմաստներն ալ թէպէտ տառերը համրանքի փոխելով հաներ է, բայց ասոնց համար ալ ուրիշ նշանակ բանեցուցեր է, ուստի աղէկ հասկընալու համար՝ ծածկագրութեան պատկերին մէջի ամեն մէկ երեք տառերը մէկմէկ անգամ սեպելով 1. 2. 3. եւն մինչև 8 թուանշանով որոշեցինք ։

Արդ երբոր ասոնց մէջէն 1 թուանշանով որոշուած բոլորակին մէջի (Ա Հ Հ) երեք տառերը ելթէ առնեմք ու հաշուեմք, հնգետասան թիւ կը գտնեմք. և (ՍԱՐԳԻՍ) անունն ալ որ այն ժամանակի կաթողիկոսին անունն է, թէ որ հաշուեմք՝ ճիշդ հնգետասան թիւ կը գտնեմք ։

ԻՄԱՍՏ Գ.

Ա	Հ	Հ			Ս	Ա	Ր	Գ	Ի	Ս	
1	7	7	15		2	1	5	3	2	2	15

Ու երբոր 5 թուանշանով որոշուած բոլորակին մէջի (Գ Ո Ո) երեք տառերը առնեմք՝ որ այս ալ իր մէջը 15 թիւ կը պարունակէ, Գադիկ Ծահնշահին գահակալութեան ժամանակի՝ Հայոց Թուականը կ'ելլէ, որ է ՆԼԸ (488), որոյ գումարն ալ 15 թիւ է ։

ԻՄԱՍՏ Դ.

Գ	Ո	Ո			Ն	Լ	Ր	
3	6	6	15		4	3	8	15

Այս երրորդ ու չորրորդ իմաստներուն ճշդութիւնք՝ վարը պատմութեանց հատուածներուն մէջ պիտի տեսնուի։

Երրորդ և չորրորդ իմաստներուն համար պատկերին 1 և 5 թուով որոշուած երկու քառորակները զատ զատ առինք· բայց հինգերորդ իմաստին համար՝ 3 և 7 թուանշաններով որոշուած քառորակներուն մէջի (ԳՐՐ ՅԻԻ) վեց տառերը մէկտեղ պիտի առնուին, որոց գումարը 20 կ'ըլլէ· և այս 20 թուով ալ՝ Եկեղեցւոյն հիմնարկութեան հանդէսին օրը հանդիսադիր գտնուող երեք վարդապետաց անուններուն սկզբնատառերը կը գտնենք, որոց գումարն ալ 20 թիւ է։

ԻՄԱՍՏ Ե·

Գ	Ր	Ր	Յ	Ի	Ի	
3	5	5	3	2	2	20

Ս	Տ	Յ	Ս	Յ	Յ	Գ	
2	4	3	2	3	3	3	20

Ս· Սարգիս վարդապետ վայելչաբան.
Տ· Տիրան վարդապետ կամ Տիրանուն իմաստասէր.
Յ· Յենովք վարդապետ.
Ս· Սամուէլ վարդապետ Երաժիշտ.
Յ· Յովսէփ վարդապետ առաջնորդ Հնձուց վանիցն.
Յ· Յովհաննէս վարդապետ հողետես՝ մականուն Կողեռն.
Գ· Գրիգոր վարդապետ Նարեկացի։ (Տե՛ս Զամչեան Պատմ. Հայոց. հտ. Բ. եր. 823. 839 852. 906. 944)։

Բայց այս իմաստը աւելի հաստատելու համար, կը վայլէ դնել հոս Արիստակէս Լաստիվերտցիէն հատուած մը, որ ինքն ալ ժամանակաւ մօտ է ծաղկարանութեան հեղինակին։

«Յաւուրս Ա· Գագկայ Շահնշահի՝ ունէր զաթոռ Հայրապետութեան տէր Սարգիս, որ-նեալ սրբութեամբ 'ի ծոց Եկեղեցւոյ, և վարժեալ կրօնաւորական ճգնութեամբ 'ի կրօնատանն՝ որ կոչի Սեւանայ կղզի. զոր չորրհին Աստուծոյ կոչեն բատ արժանաւորութեան, և նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին· որ նորին կարգօքն քաղաքավարեալ 'ի մարմնի, բարի հանդիսիւք՝ աւարտեաց զկեանս իւր։ Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրան անուն և Յեննովք՝ որ կաթողիկոսարանին էին վարդապետք, և Սամուէլ՝ որ Կամրջացն ձորոյ վանացն առաջնորդութեամբ հովուէր, և Յովսէփ՝ որ Հնձուցն էր նախագահ. (Լաստիվերտցին՝ հոս անմիջապէս կը յարէ Ստեփաննոս Աստղնիկին անունը, որ ես վերը չորսին խորհրդով գործը յիշեցի, ինչպէս որ ծաղկաքաղութեան հեղինակը ինքն է, և իրեն համար սեղանական տեղ մը ունի.) և Յովհաննէս 'ի Նոյն գաւառէ ('ի Տարօնոյ), զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զհաւատոյ դիւրն գրեաց, և Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք. և այլք բազումք, յորոց աւուրս բարձրանայր յոյժ գլխիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ . . .»։ (Լաստիվերտցի. Պատմ. գլ. Բ։)

———

Ուշադիր ընթերցողաց յայտնի է որ առաջին գործողութիւնը սկզբնատառերով եղաւ, և երկրորդը ամեն տառերը համրանքի փոխելով, և երրորդէն մինչև հինգերորդը՝ միայն չորս բոլորակներուն մէջի տառերը համրանքի փոխելով եղաւ. ասկէ ետև ըլլալիքը՝ ամեն մէկ երեք տառը անխտիր թէ՛ բոլորակներէն ըլլայ և թէ՛ միջանկեալներէն՝ մէկ մէկ անգամ ենթադրելով՝ համրանքի փոխելու է, և առաջին անգամին 37 թիւ առնելու է՝ ինչու որ 27 թիւ չելլար մէջէն. և հետզհետէ տասնական թիւ աւելցընելու է, մինչեւ 97 թիւ երթալու համար. ուստի երբոր 1. 5. 7. թուանշանով որոշուած (ԱՀՀ ԳՈՈ ՑԻԻ) ինն տառերը առնեմք ու հաշուեմք՝ 37 թիւ կը գտնեմք, և (Շահնշահ է.) այս իմաստն ալ 37 թիւ է.

ԻՄԱՍՏ Զ.

Ա	Հ	Հ	Գ	Ո	Ո	Ց	Ի	Ի		Շ	Ա	Հ	Ն	Շ	Ա	Հ	Է.	
1	7	7	3	6	6	3	2	2	37	5	1	7	4	5	1	7	7	37

Գագիկ Ա. Բագրատունի թագաւորաց շարքին մէջը եօթներորդ է, և մականունն ալ Շահնշահ է։ (Տես Պատմ. Հայ. հատ. Գ. յաւել. եր. 107։)

Տասը թիւ աւելցընելով՝ 47 թիւ պիտի գտնեմք. ուստի 1. 5. 7. 8. թուանշանով որոշուած (ԱՀՀ ԳՈՈ ՑԻԻ ՇՑՄ) տասն երկու տառերը

թէ որ առնեմք ու հաշուեմք, 47 թիւ կը գտնեմք, և (Վասակ սպարապետ) այս խմաստն ալ 47 թիւ է։

ԻՄԱՍՏ Է.

Ա	Հ	Հ	Գ	Ո	Ո	Ց	Ի	Ի	Ճ	Ց	Մ	
1	7	7	3	6	6	3	2	2	5	3	2	47

Վ	Ա	Ս	Ա	Կ	Ս	Պ	Ա	Ր	Ա	Պ	Ե	Տ	
3	1	2	1	8	2	8	1	5	1	8	5	4	47

Վասակ սպարապետը՝ Գրիգոր Մագիստրոս բազմահմուտ ու բարեպաշտ իշխանին հայրն է, և Վահրամ Պահլաւունիին մեծ եղբայրն է. ասոնք երկուքն ալ Գագիկ Շահնշահին ժամանակակից են. և իրենց քաջութեամբը և բարեպաշտութեամբը անմահ յիշատակաց արժանի՝ ազգին մեծ բարերարութիւններ ընելէն յետոյ երկուքն ալ քրիստոնէական սուրբ կրօնին վրայ արիւն թափելով՝ երջանիկ մահուամբ աշխարհէս ելեր են. ասոնց համար Վ. Հ. Միքայէլ Չամչեանը երկար գրելէն ետքը՝ բանը հոս կը կնքէ. «Այսչափ լինչ բաւական համարեսցի վասն երանելւոյն Վահրամայ նահատակի, որում նմանատիպ գտաւ և փառաւորեալ հարազատն նորին Վասակ նահատակ, այն է հայր Գրիգորի Մագիստրոսի»։ (Պատմ. Հայոց. հատ. Բ. եր. 943։)

Տասը թիւ աւելցընելով 57 թիւ պիտի առնեմք, ուստի՝ 2. 3. 4. 6. 7. թուանշաննե-

բով որոշուած (ՍՑՑ ԳՐՐ ՈԳԹ ԲՈՑ ՑԻԻ) տասն և հինգ տառերը եթէ առնեմք ու հաշուեմք՝ 57 թիւը կը գտնեմք, և (Պէհրամ Պահլաւ) այս իմաստն ալ 57 թիւ է։

ԻՄԱՍՏ Ը․

Ս	Ց	Ց	Գ	Ր	Ր	Ո	Գ	Թ	Բ	Ո	Ց	Ց	Ի	Ի	
2	3	3	3	5	5	6	3	9	2	6	3	3	2	2	57

Պ	Է	Հ	Ր	Ա	Մ	Պ	Ա	Հ	Լ	Ա	Ւ	
8	7	7	5	1	2	8	1	7	3	1	7	57

Հոս պէտք է գիտնալ որ Պէհրամ անունը պարթեւական անուն է, և մեր լեզուին մէջ Վահրամ կը հնչուի․ բայց մեր հեղինակը՝ իւր հաշիւը Պէհրամ Պահլաւին յարմարցուցեր է։

Այս դիւցազունը՝ Վասակ Պահլաւունի Հայոց սպարապետին փոքր եղբայրն է, որ ինքն ալ մեծ եղբօրը փոխանէն յետոյ Հայոց սպարապետ եղաւ․ սա էր որ Գագիկ Շահնշահին հրամանաւ՝ Ատրպատականի բռնաւորին դէմ վեց հազար Հայոց զօրքով այն ահեղ պատերազմին մէջ գտնուեցաւ. և Շիրակայ գաւառին մէջ դեռ կանգուն մնացած մարմարաչէն եկեղեցւոյն արձանագրութեանը մէջ իւր մեծագործութիւնը յայտնի կը տեսնուի։ (Տե՛ս Պատմութիւն Անւոյ. եր. 74։)

Տասը թիւ աւելցնելով 67 թիւ պիտի գտնեմք, ուստի 2․ 3․ 4․ 6․ 7․ 8. թուանշան-

ներով որոշուած (ՍՅՅ ԳՐՐ ՈԳԹ ԲՈՅ ՅԻԻ ՇՅՄ) տառն և ութը տառերը եթէ առնեմք ու հաշուեմք՝ 67 թիւ կը գտնեմք. և (Կատրամիտ Յո-վանէս Աշոտ) այս իմաստն ալ 67 թիւ է։

ԻՄԱՍՏ Թ.

Ս Յ Յ Գ Ր Ր Ո Գ Թ Բ Ո Յ Յ Ի Ի Շ Յ Մ
2 3 3 3 5 5 6 3 9 2 6 3 3 2 2 5 3 2 | 67

Կ Ա Տ Ր Ա Մ Ի Տ Յ Ո Վ Ա Ն Է Ս Ա Շ Ո Տ
6 1 4 5 1 2 2 4 3 6 3 1 4 7 2 1 5 6 4 | 67

Պատմութիւնը կը վկայէ թէ «Սա (Գագիկ Շահնշահ) առեալ էր իւր կին զդուստրն Վասակայ Սիսականի իշխանին Սիւնեաց զկատրամիտէ, յորմէ ծնան երկու որդիք. անուն անդրանկանն Յովհաննէս Սմբատ, և կրտսերոյն՝ Աշոտ»։ (Ջամչ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 872։)

Տասը թիւ աւելցընելով՝ 77 թիւ պիտի գտնեմք, ուստի՝ 1. 2. 4. 5. 6. 8. թուանշաններով որոշուած (ԱՀՀ ՍՅՅ ՈԳԹ ԳՈՈ ԲՈՅ ՇՅՄ) տառն և ութն տառերը եթէ առնեմք ու հաշուեմք, 77 թիւը կը գտնեմք. և (ա. Գագիկ Բագրատունի Աշոտեան) այս իմաստն ալ 77 թիւ է։

ԻՄԱՍՏ Ժ.

Ա Հ Հ Ս Յ Յ Ո Գ Թ Գ Ո Ո Բ Ո Յ Շ Յ Մ
1 7 7 2 3 3 6 3 9 3 6 6 2 6 3 5 3 2 | 77

ա Գ Ա Գ Ի Կ Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ի Ա Շ Ո Տ Ե Ա Ն
1 3 1 3 2 6 2 1 3 5 1 4 6 7 4 2 1 5 6 4 5 1 4 | 77

Հոս՝ Գագիկ Շահնշահին անունը և քանի-երորդ ըլլալը, և ցեղին անունը կրկնելուն պատճառը՝ հօրը անունն ալ յիշելուն համար է։

Պատմութիւնը կը վկայէ թէ «Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուրգենայ, 'ի ցեղէն Բագրատունեաց, այր հզօր և յաղթօղ 'ի պատերազմի. սա 'ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց։ Ի սորա ժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան»։ (Լաստիվերտցի. Գլ. Բ։)

«Գագիկ Բագրատունի՝ որ կարգեալ էր իշխան իշխանաց, միջին որդի Աշոտոյ Ողորմածի, և եղբայր Սմբատայ արքայի տիեզերակալի, 'ի նմին աւուր յորում մեռաւ եղբայր իւր՝ թագաւորեաց յԱնի 'ի վերայ Հայոց, և կոչեցաւ Շահնշահ. (յամի Տեառն 989 և 'ի թուին Հայոց ՆԼԸ)»։ (Զամչ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 871։)

Տարը թիւ աւելցնելով՝ 87 թիւ պիտի գտնեմք. ուստի 1. 2. 3. 4. 5. 6. 7. թուանշաններով որոշուած՝ (ԱՀՀ ՍՅԹ ԳՐՐ ՈԴԹ ԳՈՈ ՐՈԹ ՑԽԽ) քան և մէկ տառերը եթէ առնեմք ու համրեմք՝ 87 թիւը կը գտնեմք. և (Տրդատ ճարտարապետ շինեաց) այս իմաստն ալ 87 թիւ է։

ԻՄԱՍՏ ԺԱ·

Ա	Հ	Հ	Մ	Ց	Ց	Գ	Ր	Ր	Ո	Գ	Թ	Գ	Ո	Ո	Ր	Ո	Ց	Ց	Ի	Ի	
1	7	7	2	3	3	3	5	5	6	3	9	3	6	6	2	6	3	3	2	2	87

Տ	Ր	Գ	Ա	Տ	Ճ	Ա	Ր	Տ	Ա	Ր	Ա	Պ	Ե	Տ	Ց	Ա	Ի	Ր	Ի	Ն	Ե	Ա	Ց	
4	5	4	1	4	1	1	5	4	1	5	1	8	5	4	3	1	7	5	2	4	5	1	6	87

Տրդատ ճարտարապետը՝ մեր Ազգային պատմութեանց մէջ մեծ համբաւ ունի, և գաղիկ Շահնշահին ալ ժամանակակից է. ուստի տարակոյս չկայ՝ որ այս եկեղեցւոյս ալ ճարտարապետը ինքն է. և այս արհեստին մէջ իւր յաջողակութեանը վրայօք մեր Ազգային պատմիչները այսպէս կը գրեն.

« Բազում ջան եղեւ արհեստաւոր ճարտարացն Յունաց առ 'ի վերստին նորոգել (զՍուրբն Սոփի)· այլ անդ ('ի կոստանդնուպօլիս) դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ չինուածոյն իմաստուն հանճարով, պատրաստեալ զկաղապարս կազմածոյն, և սկզբնաւորեալ զշինելն, որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն : » (Ասողիկ. Գ. 27: Տե՛ս 'ի Հնախօս. Հայաս. հատ. Գ. եր. 140:)

« Եղեւ շարժումն զարհուրելի յաշխարհին Թրակացւոց և Բիւթանացւոց ; և կործանեցան բազում քաղաքք. և 'ի կոստանդնուպօլիս եւս աւերեցան բազում եկեղեցիք, ընդ որս հերձեալ պատառեցան և որմունք սրբոյն Սոփիայ, և մասն ինչ մեծի գմբեթի նորա, որով և վտանգեցաւ եկեղեցին. զոր թէպէտ և բազմօք աշխատեցան ճարտարքն Յունաց 'ի նորոգել, բայց

ոչ կարացին։ Անդ դիպաւ յայն աւուրսն Տրդատ ճարտարապետ Հայոց, և խելով հանճարով եցոյց նոցա հնարս, որով կարացին նորոգել զայն վայելուչ կս, որպէս գրէ ականատեսն Ասողնիկ»։ (Չամչ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 875։)

Տառը թիւ աւելցընելով՝ 97 թիւը պիտի գտնեմք. ուստի պատկերին մէջի 24 տառերը մէկանց առնելով հաշուելու է, ինչպէս որ երկրորդ իմաստին համար ալ այս գործողութիւնն բրինք և 97 թիւը գտանք. և (Ստեփաննոս Վարդապետ Ասողնիկ) այս իմաստն ալ 97 թիւ է։

ԻՄԱՍՏ ԺԲ.

Ս	Տ	Ե	Փ	Ա	Ն	Ն	Ո	Ս	Վ	Ա	Ր	Դ	Ա	Պ	Ե	Տ	Ա	Ս	Ո	Ղ	Ն	Ի	Կ	
2	4	5	8	1	4	4	6	2	3	1	5	4	1	8	5	4	1	2	6	9	4	2	6	97

Ծանկարանութեանս հեղինակը այս Ստեփաննոս Ասողնիկ վարդապետն է, որուն համար պատմութեանց մէջ կը կարդամք.

«Եւ Ստեփաննոս Տարօնացին որ զաշխարհապատում գիրսն շարադրեաց սքանչելի յօրինուածովք սկսեալ 'ի մարդն առաջին, և գայ բովանդակէ զպատմութիւն իւր 'ի վախճանն Գագկայ, վասն որոյ պատմութիւնս է»։ (Լուսինկերացի. գլ. Բ։)

«Ի սորա աւուրս ծաղկեցաւ Ստեփաննոս վարդապետ Տարօնեցի՝ Ասողիկ կամ Ասողնիկ

կոչեցեալ, որ և հրամանաւ. սորին Սարգսի (կաթողիկոսի) արար զպատմութիւն Հայոց ՚ի ծագմանէ ազգին մինչև ՚ի ժամանակս իւր յերիս գիրս, ցամ Տեառն 1000 կամ 1004: Սորա երեւի արարեալ և զՄեկնութիւն մարգարէութեանն Երեմիայ. զի Գրիգոր Մագիստրոս՝ որ փոքր մի յետոյ էր, և ՚ի պատանեկութեան տեսեալ էր զնա, գրէ ՚ի թուղթն առ Գէորգ վարդապետ այսպիսի ինչ. «Վասն որոյ բանս հայցէ ՚ի քէն զՄեկնութիւն Երեմիայի մարգարէի, զոր գրեալ է Ասողնկայ երջանիկ ծարագոյն ՚ծերոյ, շնորհել մեզ»: (Ջամչ. Պատմ. Հայոց. հատ. Բ. եր. 877:)

Ասողնիկ բառը մականուն է, բայց հաշուելով՝ 30 թիւ կը գտնեմք. և Պատմող բառն ալ նոյնպէս հաշուելով՝ 30 թիւ է. ուստի երբ որ ըսեմք թէ համճարեղ հեղինակը՝ այս մականունը իրեն համար ինքը հնարեր է, շատ հաւանական է, ինչու որ երեւելի գործը իւր շինած Ազգային պատմութիւնն է:

ԻՄԱՍՏ ԺԳ.

Պ	Ա	Տ	Մ	Ո	Ղ	
8	1	4	2	6	9	30

Ա	Ս	Ո	Ղ	Ն	Ի	Կ	
1	2	6	9	4	2	6	30

Կարծեմ մէկուն մտքէն պիտի չանցնի՝ թէ ութն ու կէս դար յառաջ այս ծածկաբանութիւնը անխորհուրդ շինուած ու գըր-

ոչ կարաց, Անդ դիպաւ յայն աւուրսն Տըրդատ ճարտարապետ Հայոց, և իւրով հանճարով եցոյց նոցա հնարս, որով կարացին նորոգել զայն վայելուչ ևս, որպէս գրէ ականատեսն Ասողնիկ »։ (Չամչ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 875։)

Տասը թիւ աւելցընելով՝ 97 թիւը պիտի գտնեմք. ուստի պատկերին մէջի 24 տառերը մէկանց առնելով հաշուելու է, ինչպէս որ երկրորդ իմաստին համար ալ այս գործողութիւնն ըրինք և 97 թիւը գտանք. և (Ստեփաննոս Վարդապետ Ասողնիկ) այս իմաստն ալ 97 թիւ է։

ԻՄԱՍՏ ԺԲ.

Ս	Տ	Ե	Փ	Ա	Ն	Ն	Ո	Ս	Վ	Ա	Ր	Դ	Ա	Պ	Ե	Տ	Ա	Ս	Ո	Ղ	Ն	Ի	Կ	
2	4	5	8	1	4	4	6	2	3	1	5	4	1	8	5	4	1	2	6	9	4	2	6	97

Ծածկաբանութեանս հեղինակը այս Ստեփաննոս Ասողնիկ վարդապետն է, որուն համար պատմութեանց մէջ կը կարդամք.

« Եւ Ստեփաննոս Տարօնացին որ զաշխարհապատում գիրսն շարագրեաց սքանչելի յօրինուածովք սկսեալ ՚ի մարդն առաջին, և գայ բովանդակէ զպատմութիւն իւր ՚ի վախճանն Գագկայ, վասն որոյ պատմութիւնս է »։ (Լաստիվերտցի. գլ. Բ։)

« Ի սորա աւուրս ծաղկեցաւ Ստեփաննոս վարդապետ Տարօնեցի՝ Ասողիկ կամ Ասողնիկ

կոչեցեալ, որ և հրամանաւ. սուրբն Սարգսի (կաթողիկոսի) արար զպատմութիւն Հայոց ՚ի ծագմանէ ազգին մինչև ՚ի ժամանակս իւր յերիս գիրս, ցամ Տեառն 1000 կամ 1004։ Սորա երեւի արարեալ և զՄեկնութիւն մարգարէութեանն Երեմիայ. զի Գրիգոր Մագիստրոս՝ որ փոքր մի յետոյ էր, և ՚ի պատանեկութեան տեսեալ էր զնա, գրէ ՚ի թուղթն առ Գէորգ վարդապետ այսպիսի ինչ. «վասն որոյ բանս հայցէ ՚ի քէն զՄեկնութիւն Երեմիայի մարգարէի, զոր գրեալ է Անողնկայ երջանիկ ծայրագոյն ծերոյ, շնորհել մեզ»։ (Զամչ. Պատմ. Հայոց. հատ. Բ. եր. 877։)

Անողնիկ բառը մականուն է, բայց հաշուելով՝ 30 թիւ կը գտնեմք. և Պատմող բառն ալ նոյնպէս հաշուելով՝ 30 թիւ է. ուստի երբ որ ըսեմք թէ հանճարեղ հեղինակը՝ այս մականունը իրեն համար ինքը հնարեր է, չատ հաւանական է, ինչու որ երեւելի գործը իւր չինած Ազգային պատմութիւնն է։

ԻՄԱՍՏ ԺԳ.

Պ	Ա	Տ	Մ	Ո	Ղ	
8	1	4	2	6	9	30

Ա	Ն	Ո	Ղ	Ն	Ի	Կ	
1	2	6	9	4	2	6	30

Կարծեմ մէկուն մտքէն պիտի չանցնի՝ թէ ութն ու կէս դար յառաջ այս ծածկաբանութիւնը անխորհուրդ չինուած ու գըր-

ուած ըլլայ . վասն զի մինչև որ բանը իր մէջէն իմաստ տալու համար դրսէն խորհող միտք մը չունենայ , անկարելի է անկէ իմաստ հանելը . օրինակի համար՝ գրաշարի սեղանէն դիպուածով 24 տառ կրնամք առնել և ցրիւ շարել , բայց մէջէն իմաստ հանելն անհնարին է . ուստի կ՚երեւի որ տրուած բացատրութիւններուն վրայ տարակոյս չի մնար , որովհետեւ այն ժամանակի պատմութիւններուն հետ ալ բաղդատելով՝ շատ համաձայն գտնուեցան :

Բայց արդարև այս կերպ գրուածքէն հասարակութեան մեծ մասը չկրնար իրեն շահ մը քաղել , սակայն հասարակաց մէջէն ալ անհնար է որ բանասէր ու հետաքրքիր մարդիկ պակաս ըլլան . 'ի հարկէ լրագիրը կարդացին , ու իրենց մտքին զարկաւ այս ծածկաբանութեան ձեւը . մեք զայն բացատրելով՝ անոնց հետաքրքրութիւնը յագեցընել ուզեցինք՝ թէ որ հաճելի կը համարին . բայց թէ որ զուր աշխատութիւն մը սեպեն՝ մեք դարձեալ մեզի համար շահ ունիմք . վասն զի քանի մը երեւելի հեղինակներու պատմագրութիւնը նորէն աչքէ անցընելով , ազգային անցքերը՝ և անոնցմէ յառաջ եկած տխուր յիշատակները լաւ ևս տպաւորեցան մեր սրտին մէջ , և հառաչել տուին մեզի . ու թէ որ չեմ սխալիր՝ այս հառաչանաց արձագանքը մինչև Շիրակայ դաշտը հասան . . . ո՜հ , ո՜րչափ քաղցր ու ախորժելի է հայրենեաց յիշատակութիւնը . . . . :

ՁՈՐ Ի ՁՔՆԱՂՆ ԱՆԻ ՀՆԱՐԵԱՑ ԱՍ ՈՂ ՆԻԿ
ՋԱՑՆ ՑԱՆՇՈՒՔՆ ԱՆԻ ՈՂՐԱՑ ՆԻ ԿՈՂ ԱՍ

Ոտանաւորիս առաջին տողը բաղկացընող հինգ բառին սկզբնատառերը եթէ հաշուեմք՝ 17 թիւ կը գտնեմք · և Քարուղաշտի եկեղեցւոյն շինութեան ժամանակի Հայոց թուականը որ է ՆԽԹ, այս երեք թուանշան տառերն ալ եթէ գումարեմք՝ ճիշդ 17 թիւ կը գտնեմք · ինչպէս,

Ձ Ի Ա Հ Ա — Ն Խ Թ

6 2 1 7 1 | 17 — 4 4 9 | 17

Երկրորդ տողը բաղկացընող հինգ բառին սկզբնատառերը եթէ հաշուեմք՝ 20 թիւ կը գտնեմք · և մեր այս տարուան Հայոց թուականը՝ որ է ՌՄՂԸ, այս չորս թուանշան տառերն ալ եթէ գումարեմք՝ ճիշդ 20 թիւ կը գտնեմք · ինչպէս,

Ձ Ց Ա Ո Ն — Ռ Մ Ղ Ը

6 3 1 6 4 | 20 — 1 2 9 8 | 20

Ոտանաւորին առաջին տողը 27 տառերէ բաղկացեալ է, և այս 27 տառերը թէ որ հաշուեմք՝ 119 թիւ կ'ելլէ։ Երկրորդ տողն ալ ճիշդ 27 տառերէ կը բաղկանայ ու 119 թիւ կու տայ։

Աս	ող	Նիկ		Նիկ	ող	աս
ա	բ	գ		գ	բ	ա

Բացատրութեանս հեղինակը՝ Վենետիկու Մխիթարեան ուխտէն Վ. Հ. Ղեւոնդ Մարգարեան (Ալիշան) վարդապետին ուղղեց նամակաւ մը իւր այս աշխատութիւնը, որպէս զի թէ որ արժան դատէ՝ հրատարակէ։ Յիշեալ Վ. վարդապետը՝ բացատրութեանս հեղինակին յետագայ նամակը գրելով, Բազմավէպ տետրակներուն 1850 Յունուար 1 թուովը այս Անիի ծածկագիր յիշատակարանին բացատրութիւնը հրատարակեց։

Ազնիւ Տեառն բանասիրի և ազգասիրի Նիկողայոսի խնդալ·

27 Նոյեմբեր 1849· Վենետիկ·

Զգիր մեծամեծար սիրոյդ և զբանասիրական՝ մանաւանդ զազգասէր ախորժակացդ՝ ընկալայ 'ի ձեռն իմոյս արգոյ հոգեկցորդ եղբօր հօր Աբրահամու վարդապետի. և յաւէտ ուրախ եղէ գտեալ յեղակարծուց նոր զոմն փութաջան ազգասէր, որ և այնքան վառեալ յոգի հայրենականացն շնորհաց և աւանդից, մինչ և զմերս փանաքութիւն՝ որ 'ի նոյն կրթի խոկ և սէր, զուգակշռել կամ մերձեցուցանել* վեհից անձանց և իւրոցն սրտի ըղձալեաց։ Շնորհեմք սիրոյդ զսիրոյդ համարձակութիւն, և մեք գիտակ մերումս չափու՝ զքոյդ առաւել իմանամք սովին զայնուութիւն իմացուածոց։

Ոչ փոքր հաճութիւն և զարմանս յաւել 'ի մեզ և գիւտ դժուարալոյծ և անյօղաձայն տառիցն, հեշտալիր պտուղ քրտնավաստակ մտախոհութեան երկայնամիտ ոգւոյդ և հանճարիմաց մտաց. որ զի կամ սորոյդ և

աներկբայ լուծումն է մտաց արձանագրողին , և այս Քեզ պսակ , և կամ անդր քան զարձանագրողին կարծիս և զբնաւից ակնկալութիւն ճարտարագիւտ հնարք յանկուցիչ մտաց , և այս փառք առաւելահրաշք · որով ձայնն ծածկեալ 'ի հարուստ լռութեան դարուց արտահնչէ այս առաջին 'ի վսեմունակն Անի , կամ արձագանք ճչգրտատիպք բացագանչեն 'ի վի՛ն վեհաշուք Ծաղկանց ձորոյն , և միօրինակ հրճուին տխրագնաց գետոյն Ախուրեան՝ բազմայիշատակ ալիք ։ Արդ զայնքանոյ երկասիրութեանդ ընծայումն ընկալեալ յօժար սրտիւ՝ օժանդակեմք 'ի լոյս , 'ի սկիզբն մերձեցելոյս Նորոյ տարւոյ , 'ի զբօսանս և 'ի խրախոյս մերազնեայ բանասիրաց , որպէս և խնդիր Ազնուութեանդ պահանջէ ։ Բերկրեալ ընդ բերմունս հայրենասէր սըրտիդ , համակիր սրտիւ մատուցանեմ Քեզ և քոյոցդ սիրելեաց՝ 'ի պտղոյ տէրունականս պաշտաման զօրհնախառն մաղթանս 'ի յամայր բարեկենդանութիւն ։

Ազնիւ տէրութեանդ

Խ. Ծ. Եւ աղօթարար

Տօժանեալ Հ. Ղևոնդ Վարդապետ Մ. Ալիշան.





Կարսի Առաջնորդ շնորհաշուք Կարապետ վարդապետին (չորրորդ տարի) 175 թիւ Հայաստան լրագրոյ միջոցաւ հրատարակել տուած արձանագրութիւններուն մէջ երկու ծածկագիր յիշատակարան ալ գտնուեցաւ. առաջինը որ Շիրակայ գաւառին աւերակներէն մէկուն մէջ է, վիրաբոյժ սպեղանի մը ձեռք բերելու ճարտար նուսխան է, բայց մեծ աշխատութիւն կ'ուզէ և աշխատողներուն ալ շատ սուղի կը նստի. անոր համար բացատրութեանս հեղինակը այն կտորը լռութեամբ պատուեց, ու երկրորդը որ Հոռոմոսի վանքին մէջն է՝ բացատրեց, և հետեւեալ նամակաւ Հայաստան լրագրոյն ուղղեց, որ 1851 Յունուար 5 թուով հրատարակուեցաւ։

Արգոյ հրատարակիչ.

Որովհետեւ բռնադատեցիք մեր տկարութիւնը՝ այս երկրորդ ծածկաբանութիւնն ալ բացատրելու. ահա ես ալ ձեր կամեցողութիւնը հարկ մը սեպելով իմ վրաս, համարձակեցայ որչափ որ միտքս զօրեցին՝ զանի բացատրելու, համեմատութեամբ ազգային պատմութեան. ուստի կ'աղաչեմ որ այս մեր բանասիրական աշխատութիւնը իբրեւ փունջ մը ծաղկան ընդունէք, և լրագրոյդ միջոցաւ հրատարակէք. որն որ հայրենասիրական եռանդեամբ մը կ'ընծայեմ ազգիս խելամուտ և հետաքրքիր ընթերցողներուն, վրա-

տահանալով անոնց ներգործութեանը, որ թէ գրանուած իմաստներուն հանեցան' 'ի հարկէ Նախնեաց իմաստութեանը վրայ պիտի զարմանան. բայց թէ որ անյարմար բան մը սեպեն, կրնան գուշակել որ Հայաստանի մը պարտէզին մէջ' ըստ որում պարտէզ, անհոտ ծաղիկ մ' ալ գտնուիլը' պարտէզին արհամարհութիւն մը չէ. բայց և այսպէս' Անւոյ աւերակներուն մէջ Նախնեաց յիշատակները փնտռող քրտնաջխատ շնորհափայլ Կարապետ վարդապետին հայրենասիրութեանը մենք ալ կցորդած համարուինք նէ, աշխատութիւննիս վարձատրուած կ'ըլլայ:

18 Հոկտ. 1850.
'ի Կ. Պոլիս.

Մնամ յարգութեանդ
ջերմեռանդ բարեմաղթու
Վլրանկէր Նիկողոս Հովհանեան

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԾԱԾԿԱԳԻՐ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԻՑ

Հայաստան լրագրոյն չորրորդ տարուան 175 թուով հրատարակուած Հոռոմոսի վանքին ստորագրութեանց մէջ՝ հինգերորդ եկեղեց-ւոյն արեւմտեան լուսամուտի մը դրսի վերի կողմը կարգ մը անյօդաձայն տառեր կան շարուած այս ձեւով․

+ ԻՌՈՋԺԳՂԸՄ ։ ՄԿՂԸ ։ և 'ի ՆՁԱ ։ ԹԱ ։ Հ ։

Ասոր ետեւէն ալ արձանագրութիւն մը կը հետեւի այսպէս․

«Ես Սմբատ .... որդի Գագկայ .... ետու զիմ գեղս զՍահտառունիս 'ի մեր հանգըստարանս թագաւորաց 'ի տիեզերահռչակ վանսն Հոռոմոսի վասն մեր մեղաց թողութեան․ և գրեցի 'ի սուրբ Գէորգ յամենայն տարի Դ. քառասունք Գագկայ ։ Եւ 'ի վախճանելս՝ Բ. ինձ, և Բ. Գագկայ մինչ 'ի գալուստ տեառն» եա̅, եա̅։

Եւ այս արձանագրութեան վերջացած տեղը՝ մանր գրով գրուած ստորագրութեան պէս բան մ'ալ կայ ասանկ․

+ ԹՈՎՄԱՒԻԴ

Արդ մեր նախնեաց արդիւնքը՝ մանաւանդ մեծանուն հեղինակին վաստակը՝ միայն ժամանակին մաշող ժանիքներէն ազատելու մտօք՝ այս ծածկագրանութիւնն ալ քանի մը յօդուածի բաժնելով բացատրել ջանացի ։

Ա. Տառերուն չարքէն վերջակէտով զատուած ութն տառերը՝ միաւորի ուժով 35 թիւ կ'արտադրեն. ԱՆԴԱՐՁԱԿԱՆ բառն ալ նոյնպէս 35 թիւ է ։

Ի	Ռ	Ո	Ջ	Ժ	Ղ	Ը	Մ	
2	1	6	6	1	9	8	2	35

Ա	Ն	Դ	Ա	Ր	Ձ	Ա	Կ	Ա	Ն	
1	4	4	1	5	8	1	6	1	4	35

«Անդարձական» բառը «կտակ» ըսել է. արձանագրութիւնն ալ յայտնի կ'իմացընէ՝ որ Գ. Սմբատ Ցովհաննէս թագաւորը իւր Սահառունի դեղը Հոռոմոսի վանքին նուիրեր է կտակաւ. ուստի այս ութն տառերը հոս արձանագրութեան վերտառութեանը առաջին մասն են ։

Բ. Հետեւեալ չորս տառերը (ՄԿՂԸ) նոյնպէս վերջակէտով զատուած՝ միաւորի ուժով 25 թիւ կ'արտադրեն. ու թէ որ 25 թուոյն հորիզոնական դիրքը փոխեմք և ուղղահայեաց դիրքի վերածելով գումարեմք, 7 թիւ կը գտնեմք ։

Մ	Կ	Ղ	Ը				
2	6	9	8	25	2	5	7

Եւ ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ՝ այս երկու բառերով ալ նոյն գործողութեամբ՝ 7 թիւ կը գտնեմք,

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ

Որ կտակագրին անունն է, ինչպէս որ արձանագրութիւնը յայտնի կ'իմացընէ. ու (ՄԿՂԸ), այս չորս տառերն ալ՝ հոս վերտառութեան երկրորդ մասն են։

Բայց գիտնալու է որ՝ համրանքի մը հորինուածական գիրքը ուղղահայեացի փոխելով՝ մէջէն պահուած իմաստ հանելը այն ժամանակը կ'ըլլայ, երբոր նոյն իմաստը յայտնի խօսքով ալ անմիջապէս գրուած ըլլայ. ինչպէս այս արձանագրութեան մէջ ալ Սմբատայ անունը յայտնի գրուած է։

Գ. Վերտառութեան վերջին մասին համար կը տեսնան սա հետեւեալ տառերը. «Ե. 'ի ՆՁԱ։ ԹԱ. Հ». տառք նկատողը անշուշտ սա հետեւեալ բանը կը կարդայ. «Ե. 'ի 481 թուականին Հայոց». բայց այսչափը բաւական սեպելով ձգել անցնելու չէ, տառ մէջ ալ պահուած իմաստ փնտռելու է. ուստի՝ ծածկաբանօրէն ալ ըսել է, «ՅԱՄԻ (ի նախդրին զօրութեամբը) ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ (ՆՁԱ) այս երեք տառերուն միաւորի ուժովը (Ն=4+Ձ=8+Ա=1=13), ԹԱԳԱՒՈՐԵԼՈՅՆ ՀԱՅՈՑ (ԹԱ. Հ. այս երեք տառերուն ալ համառօտագրութեան զօրութեամբը)։ Ասոր իւր մէջէն ապացոյց՝ Թ տառին քովը անմիջապէս Ա մը աւելցընելն է. նշու որ՝ համառօտագրելու համար «Հայոց»

Արդ մեր նախնեաց արդիւնքը՝ մանաւանդ մեծանուն հեղինակին վաստակը՝ միայն ժամանակին մաշող ժանիքներէն ազատելու միօք՝ այս ծածկագրանութիւնն ալ քանի մը յօդուածի բաժնելով բացատրել ջանացի ։

Ա. Տառերուն շարքէն վերջակէտով զատուած ութն տառերը՝ միաւորի ուժով 35 թիւ կ՚արտադրեն. ԱՆԴԱՐՁԱԿԱՆ բառն ալ նոյնպէս 35 թիւ է ։

Ի Ռ Ո Ջ Ժ Ղ Ը Մ
2 1 6 6 1 9 8 2 | 35

Ա Ն Դ Ա Ր Ձ Ա Կ Ա Ն
1 4 4 1 5 8 1 6 1 4 | 35

«Անդարձական» բառը «կտակ» ըսել է. արձանագրութիւնն ալ յայտնի կ՚իմացընէ՝ որ Գ. Սմբատ Ցովհաննէս թագաւորը իւր Սահառունի դեղը Հոռոմոսի վանքին նուիրեր է կտակաւ. ուստի այս ութն տառերը հօս արձանագրութեան վերտառութեանը առաջին մասն են.

Բ. Հետեւեալ չորս տառերը (ՄԿՂԸ) նոյնպէս վերջակէտով զատուած՝ միաւորի ուժով 25 թիւ կ՚արտադրեն. ու թէ որ 25 թուոյն հորիզոնական դիրքը փոխեմք և ուղղահայեաց դիրքի վերածելով գումարեմք, 7 թիւ կը գտնեմք ։

Մ Կ Ղ Ը
2 6 9 8 | 25 | 2 5 | 7

Եւ ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ՝ այս երկու բառերով ալ նոյն գործողութեամբ՝ 7 թիւ կը գտնեմք,

ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ
2 2 2 1 4 9 1 5 1 7 6 20 | 45 |

Որ կտակագրին անունն է, ինչպէս որ արձա-նագրութիւնը յայտնի կ'իմացընէ․ ու (ՄԿԴԸ), այս չորս տառերն ալ՝ հօս վերտառութեան երկրորդ մասն են։

Բայց գիտնալու է որ՝ համրանքի մը հորիզոնական գիրքը ուղղահայեացի փոխելով՝ մէջէն պահուած իմաստ հանելը այն ժամանակը կ'ըլլայ, երբոր նոյն իմաստը յայտնի խօսքով ալ անմիջապէս գրուած ըլլայ․ ինչպէս այս արձանագրութեան մէջ ալ Սմբատայ անունը յայտնի գրուած է։

Գ. Վերտառութեան վերջին մասին համար կը մնան սա հետեւեալ տառերը․ « Ե 'ի ՆՁԱ ։ ԹԱ ։ Հ »․ ասոնք նկատողը անշուշտ սա հետեւեալ բանը կը կարդայ․ « Ե 'ի 481 Թուականին Հայոց »․ բայց այսչափը բաւական սեպելով ձգել անցնելու չէ, ասոր մէջ ալ պահուած իմաստ փնտռելու է․ ուստի՝ ծածկաբանօրէն ալ ըսել է, « ՑԱՄԻ (ի նախդրին զօրութեամբը) ԵՐԻՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ (ՆՁԱ) այս երեք տառերուն միաւորի ուժովը (Ն=4+Ձ=8+Ա=1=13), ԹԱԳԱՒՈՐԵԼՈՅՆ ՀԱՅՈՑ (ԹԱ․ Հ․ այս երեք տառերուն ալ համառօտագրութեան զօրութեամբը)։ Ասոր իւր մէջէն ապացոյց՝ Թ տառին քովը անմիջապէս Ա մը աւելցընելն է. ինչու որ՝ համառօտագրելու համար « Հայոց »

քսելու տեղ՝ Հ դնողը, կրնար «Թուականին» տեղն ալ Թ մը դնելով անցնիլ, բայց տառնկ չէ ըրեր՝ Ա մ՚ալ աւելցուցեր է, ընթերցողին միտքը արթնցընելու համար՝ պարզաբար իմացուած էն ՚ի զատ պահուած իմաստ մ՚ալ որոնելու. և գըրուէն վկայ՝ մեր ազգային պատմութիւնն է. վասն զի Հայոց 481 թուականին՝ որ այս վերջի մասին մէջ յայտնի դրուած է, Սմբատայ իշխանութեան երեքտասաներորդ տարին կը պատասխանէ։ (Տե՛ս Պատմ. Հայ. ՚ի վերջ Գ. հատ. Դասաւորութ. Չամչեան. ՚ի Յաւել. եր. 77։)

Արդ այս անյօդաձայն տառերուն չորսը՝ ներքեւի արձանագրութեանը վերատառութիւնն է, որուն մէջէն հետեւեալ իմաստը կ՚ելլէ. «Անդարձական Սմբատայ թագաւորի, յամի երեքտասաներորդի թագաւորելոյն Հայոց»։

Դ. Երկրորդ յօդուածին մէջ (ՄԿՂՔ) տառերը՝ որ կտակագրին անունը ցըցուցին, հիմա ալ կտակին թէութիւնները պիտի ցուցընեն. կտակին թէութիւնները՝ արձանագրութեան մէջին նայելով պարզաբար տարին չորս քառասունք է. այսինքն 366 օրուան մէջ՝ 160 օր հօրը Ա. Գագիկ Շահնշահին՝ ու իրեն համար աղօթք ընել կը պատուիրէ. բայց տարիին բոլորական թիւէն՝ որ է 366 օր, սա տէրունական օրերը կ՚ուզէ որ դուրս հանեն. Ծննդեան առաջին օրը 1. Զատկի առաջին ու երկրորդ օրերը 3. Համբարձման օրը 4. Հոգեգալստեան օրը 5. Այլակերպութեան առաջին օրը 6. Վե-

բափոխման առաջին օրը 7. վերացման խաչի առաջին օրը 8։ Արդ 366 էն 8 ելլէ նէ՝ 358 կը մնայ, և (ՄԿՂԸ) տառերն ալ սովորական հաշուով 358 թիւ կ՚արտադրեն։

Մ Կ Ղ Ը
200 60 90 8 | 358

Հոս մտադրութեան արժանի բան մ՚ ալ կայ. թէ որ միտքը միայն 358 թիւ ցուցընել ըլլար՝ կրնար ուրիշ աւելի պարզ կերպով մը ցուցընել. ինչպէս (ՅԾԸ) այս երեք տառերն ալ ճիշդ 358 թիւ կ՚արտադրեն սովորաբար, և միաւորի ուժով ալ 16, որուն հորիզոնական դիրքը թէ որ փոխուի՝ դարձեալ 7 թիւ կ՚արտադրէ, ու երկրորդ յօդուածով եղած դարձողութեան միտս մը չի տար.

Յ Ծ Ը
300 50 8 | 16 | 1 6 | 7

Բայց քառասունքը չորս ըլլալուն համար 358 թիւը (ՄԿՂԸ) այս չորս տառերով չափեր է. այնպէս որ առաջին սկիզբէն առնելով՝ (Մ) այսինքն 200 օրուան մէջ առաջին քառասունքը պիտի վճարուի. (Կ) այսինքն 60 օրուան մէջ երկրորդ քառասունքը պիտի վճարուի. (Ղ) այսինքն 90 օրուան մէջ երրորդ քառասունքը պիտի վճարուի. (Ը) այսինքն 8 օրուան մէջ չորրորդ քառասունքը պիտի վճարուի։

Ե. Թէ որ չայրուած տառերը բաց 'ի միջանկեալ (և) շաղկապէն ու ('ի) նախդիրէն՝ մեր տառերուն սովորական թուանշանի ուժովը եթէ հաշուեմք՝ գումարը կ'ըլլայ 2853, որ աշխարհի արարչութենէն առնելով՝ մեր ազգին առաջին նախահաւուն՝ Հայկ նահապետին տիրապետութեան թուականն է ըստ իօթանասնից. (Տե՛ս Պատմ. Հայ. 'ի վերջ Գ. հատ. Դասակարգ. էջխ. եր. 23.)

Ի	Ռ	Ո	Չ	Ժ	Ղ	Ը	Մ	Մ	Կ	Ղ	Ը	Ն	Ջ	Ա	Թ	Ա	Հ	
20	1000	600	6	10	90	8	200	200	60	90	8	400	80	1	9	1	70	2853

Զ. Մեր Բագրատունի իշխաններն՝ իրենց ծագումը հրէից ազգէն ըլլալը քաջ գիտէին. ուստի հեղինակը՝ Սմբատայ բուն նախահաւ Աբրահամ նահապետին կոչման՝ ու Եգիպտոս իջնալուն թուականին շատ մօտ թուական մ'ալ հաներ է. Ըստ ժամանակագրաց կոչումն Աբրահամու՝ նախ քան զՔրիստոս 1917 տարի է. (Տե՛ս Պատմ. Հայ. ի վերջ Գ. հատ. Դասակ. էջխտ. եր. 24.) արդ՝ առջի ի տառը նախդիր ու հետեւեալ եօթն տառերը որ վերջակէտով զատուած են, դարձեալ սովորական թուանշանի ուժով հաշուելով՝ գումարը 1914 է. և ինչպէս ըսինք՝ ասիկայ վերի թուականէն քանի մը տարի միայն տարբերութիւն կ'ունենայ։

Ռ	Ո	Չ	Ժ	Ղ	Ը	Մ	
1000	600	6	10	90	8	200	1914

Է. Դարձեալ առջի Ի տառը Նախդիր, և միայն Ռ. տառը սովորական հաշուով առնելու է՝ որ է 1000, և մնացեալ վեց տառերը միաւորի ուժով քանեցընելով՝ գումարը կ'ըլլայ 1032, որ Սմբատայ կտակ ըրած ժամանակին Փրկչի Թուականն է։

Ռ	Ո	Ջ	Ժ	Ղ	Ը	Մ	
1000	6	6	1	9	8	2	1032

Այս ճշդութիւնը ինքնին յայտնի է. որովհետեւ տառերուն չորսին մէջ արդէն Հայոց Թուականը կայ, որ է ՆՁԱ (481). ասոր վրայ աւելցո՛ւր Փրկչի Թուականին ու Հայոց Թուականին մէջտեղ եղած տարբերութիւնը՝ որ է 551, գումարը կ'ըլլայ 1032.

481
551
——
1032

Ը. Վերի եօթներորդ յօդուածին մէջ Ի Նախդիրը դուրս ձգեցինք ու միայն Ռ տառը սովորական կերպով հաշուեցինք. այժմ այս ութերորդ յօդուածիս մէջ՝ երկուքն ալ դուրս ձգելու ու մնացած վեց տառերն ալ սովորական կերպով հաշուելու է, գումարը կ'ըլլայ 914.

Ո	Ջ	Ժ	Ղ	Ը	Մ	
600	6	10	90	8	200	914

Այս գումարէն՝ այն ժամանակի Հայոց թուականը՝ որ է 481 հանելու է, ինչու որ տառերուն շարքին մէջ այս թուականը յայտնի ալ գրուած է. կը մնայ՝ 433. այս ալ Հագարացւոց առաջին Ամիրապետին և օրէնսդրին երեւնալուն թուականն է, որ իրենց հասարակ թուականէն՝ այսինքն հիճրէթէն տասը տարի աւելի է։ Պատմութիւնը կ'ըսէ որ (յամի Տեառն 622) «իբր տասն ամօք յառաջ երեւեալ էր յանապատին Արաբիոյ՝ 'ի Փառաքառէսին լարմէ՝ առաջին Ամիրապետ Հագարացւոց. ևն։ (Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 340։)

Արդ հիճրէթի առաջներորդ տարին՝ որ Փրկչի 622 թուականէն կ'սկսի, պատմութեան այս խօսքին նայելով 622 թուականը՝ ամիրապետին երեւմանը մետասաներորդ տարին, և ամիրապետութեանը առաջներորդ տարին կ'ըլլայ, և հետեւաբար ալ 1032 Փրկչի թուականին և 481 Հայոց թուականին ճիշտ կը պատասխանէ 433 թիւը. և որովհետև մեր Բագրատունի իշխանները միշտ հարկատու էին Հագարացւոց ամիրապետներուն, հաւանական է որ Հագարացւոց հետ ունեցած գործառնութեանցը մէջ անոնց թուականը կը գործածէին. ծածկաբանութեանս հանճարեղ հեղինակին միտքն ալ՝ զանազան թուականները իրարու յարմարցնել ըլլալով՝ վարպետութեամբ մը այս թուականն ալ ցըցուցեր է։

[illegible]

[illegible] 6. [illegible]

[illegible]

[illegible] 1032 [illegible]
[illegible] 6 [illegible]

Այս գումարէն՝ այն ժամանակի Հայոց Թուականը՝ որ է 481 հանելու է, ինչու որ՝ տառերուն շարքին մէջ այս Թուականը յայտնի ալ գրուած է. կը մնայ՝ 433. այս ալ Հագարացւոց առաջին Ամիրապետին և օրէնսդրին ծնանելուն Թուականն է, որ իրենց Հասարակ Թուականէն՝ այսինքն Հիճրէթէն տասը տարի աւելի է: Պատմութիւնը կ՚ըսէ որ (յամի Տեառն 622) «իբր տասն ամօք յառաջ երեւեալ էր յանապատին Արաբիայ՝ ՚ի Փառքառէօսին զարմէ՝ առաջին Ամիրապետ Հագարացւոց. եա: (Պատմ Հայ. հատ. Բ. եր. 340:)

Արդ Հիճրէթի առաջներորդ տարին՝ որ Փրկչի 622 Թուականէն կ՚սկսի, պատմութեան այս խօսքին նայելով 622 Թուականը՝ ամիրապետին երեւմանը մետասաներորդ տարին, և ամիրապետութեանը առաջներորդ տարին կ՚ըլլայ, և հետեւաբար ալ 1032 Փրկչի Թուականին և 481 Հայոց Թուականին ճիշտ կը պատասխանէ 433 Թիւը. և որովհետև մեր Բագրատունի իշխանները միշտ հարկատու էին Հագարացւոց ամիրապետներուն, հաւանական է որ Հագարացւոց հետ ունեցած գործառնութեանցը մէջ անոնց Թուականը կը գործածէին. ծածկաբանութեանս հանճարեղ հեղինակին միտքն ալ՝ զանազան Թուականները իրարու յարմարցընել ըլլալով՝ վարպետութեամբ մը այս Թուականն ալ ցըցուցեր է:

Թ. Արձանագրութեան վերջացած տեղը՝ ստորագրութեան ձեւով ու մանր գրով գըրուած Ռոջժգըմ ձայնը յատուկ անուն չէ և ոչ ալ նշանական բառ է. այլ նախ՝ Փրկչի 1032 թուականին կրկնութիւնն է, համրանքին հորիզոնական գիրքը՝ ուղղահայեաց գիրքին վերածելու եղանակաւ, որ այս եղանակը՝ առաջուց յայտնի գրուած բաներու համար 'ի գործ կ'ածուի ըսեր եմք: Արդ ինչպէս որ եօթներորդ յօդուածին մէջ՝ տառերուն չորքէն առաջին ի նախդիրը դուրս ձգելով ու միայն Թ տառը հազարաւոր՝ և մնացեալ վեց տառերը միաւորի ուժով առինք, ու Փրկչի 1032 թուականը գտանք, այժմ հոս՝ Ռ տառն ալ միաւորի ուժով պիտի առնենք, որով 7 տառերուն գումարը կ'ըլլայ 33.

Ռ	Ո	Ջ	Ժ	Գ	Ը	Մ	
1	6	9	1	3	8	2	33

Այսր հորիզոնական գիրքը ուղղահայեաց գիրքի վերածելով թէ որ գումարեմք՝ արտադրեալը կ'ըլլայ 6. ինչպէս,

$$\begin{array}{c} 33 \\ \hline 3 \\ 3 \\ \hline 6 \end{array}$$

Փրկչի 1032 թուականն ալ այս եղանակաւ ինչպէս որ 6 թիւ կ'արտադրէ,

1
9
3
2
—
6

Նմանապէս Բուսէլիքէ ձայնին ալ այս եղանակաւ 6 թիւ կ'արտադրէ․

Թ Ո Վ Մ Ա Ի Ի Գ

Իւ այս անունյան ձայնին՝ նախ փրկչի թուականին կրկնութիւնն ըլլալուն ապացոյցը իր մէջն է․ առաջին տառը որ է Թ, եօթներորդ տառը որ է Ի ու վեցերորդ տառը որ է Ի՝ թէ որ զատեմք, այս 3 տառերով «Թիւ» բառը կը բաղկանայ, որ թուականին արմատն է․ ու մնացեալ սա տառերը «Ովմագ»՝ միաւորի ուժով դարձեալ նոյն թուականին ուժը չի կորսընցընելով՝ 15 թիւ կ'արտադրեն․

Ո Վ Մ Ա Գ

Աստ ալ հորիզոնական գիրքը ուղղահայեացի փոխելով եթէ գումարեմք՝ տակաւին 6 թիւը ամբողջ կը պահէ՝ փրկչի թուականէն արտադրեալ 6 թուոյն հաւասար․

15
—
1
5
—
15

Ժ. Բայց այս օչնաք հինգ տառերը ուրիշ պաշտօն մ'ալ ունին, որով ծածկաբանութեան մեծահամբաւ հեղինակին անունը երեւան կ'ելլէ, ուստի խորհրդով ալ ստորագրութեան ձեւով գրեր է. արդ՝ այս հինգ տառերը հետեւեալ ստորագրութեան սկզբնատառերն են.

Որդի Վասակայ Մեծի Առն Գրիգոր

Ասոր հաստատ ապացոյց՝ ստորագրութիւնը բաղկացնող տառերուն թուոյն ուղղահայեաց գիրքէն, ու նոյն տառերէն՝ միաւորի ուժով արտադրեալ թուոյն ուղղահայեաց գիրքէն, և օչնաք՝ այս հինգ տառերուն ուղղահայեաց գիրքէն արտադրեալ 6 թուոյն հաւասարութիւնն է. արդ՝ ստորագրութիւնը 24 տառերէ բաղկացեալ է, որուն ուղղահայեացը կ'ընէ 6.

2
4
—
6

Ստորագրութիւնը բաղկացընող տառերը՝ միաւորի ուժով 78 թիւ կ'արտադրեն. ինչպէս,

Ո	Ր	Դ	Ի	Վ	Ա	Ս	Ա	Կ	Ա	Յ	Մ	Ե	Ծ	Ի	Ա	Ռ	Ն	Գ	Ր	Ի	Գ	Ո	Ր	
6	5	4	2	3	1	2	1	6	1	3	2	5	5	2	1	1	4	3	5	2	3	6	5	78

Եւ այս 78 թուոյն հորիզոնական գիրքը կրկին անգամ ուղղահայեացի վերածելով կը գումարեմք, ու ճիշդ մնացած 6 թիւերնիս կը գտնեմք.

78
7
8
15
1
5
6

Իւ ծածկարանութեանս հեղինակն ալ նոյն ինքն մեծն Գրիգոր Մագիստրոս՝ բազմարդիւն և կրօնասէր իշխանը բոլորին վրայ տարակոյս չի մնար · որովհետեւ ինքը Յովհաննէս Սմբատ երրորդին ժամանակակից ու սիրելին էր ։ Արիստակէս Լաստիվերտցին կ՚ըսէ՝ այս փառաւոր իշխանին համար. «Այր իմաստուն էր և խելամուտ յոյժ Աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք» · (Եր. 41.) ու հեղինակին գրած մէկ նամակէն կ՚իմացուի համարողական արուեստին մէջ որչափ հմտութիւն ունենալը · որն որ Պետրոս Գետարդել կաթուղիկոսին գրելով՝ անձկանօք կը խնդրէ հայրապետէն՝ Անանիա Շիրակացիին համարողական արուեստին գիրքը , որուն խանգարուածը հիմա վեցհազարեակ անունով՝ ստախօս կախարդներու ձեռքը ու նախապաշարեալ ռամիկներու բերանը ժուռ կու գայ ։ « Իւ զի (ասէ) բաղում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ մինչ տակաւին յիմում անտիական ելով տիս, հազիւ հաղ մակացու այսմ եղեալ՝ ըստ որում են յարաբացւոց և քաղդէացւոց և յունաց , ոչ դանդաղեցայց քննութեամբ

դիմորձ առնուլ․ և խնդրեմք 'ի [illegible] լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ՝ (զգիրս Անանիայ Շիրակայնւոյ, որ բազում աշխատութեամբ և յածաչու խոնջմամբ հաւաքեալ 'ի զանազան յօգնաբեղուն մատենից)․ զի այժմ մերձ 'ի ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան, զի մի՛ յերկոցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քանզի լուսով քո տեսանեմք զլոյս։ Ապա եթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի քումդ աստուածպետական իշխանութեանդ, զոր և կամեսցիս՝ այն իբրև յԱստուածուստ պարգեւ համարեալ է մեզ. ո՛չ լեր փոխանն Աստուծոյ »։

ՎԵՐՋ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԻՆ, ՅԵՐԵՍ 7․

« Անի քաղաքի Մայր եկեղեցիէն կէս ժամ հեռու ընդ հարաւակողմն 'ի ձորամիջի իբրև զլեզու երկարեցեալ 'ի վերայ Ախուրեան գետոյ և բարձրացեալ դըժուարընթաց ճանապարհաւ 'ի վերայ քարաժայռի գոյ վանք մի զոր Տաճիկքն Ղըզ ղալէսի կոչեն....։ Այս վանիցս 'ի հիւսիսակողման յորմն փոքրիկ լուսամուտ մի կայ քառանկիւնի կարմիր քարի վերայ, չրթունքն գեղեցկաձեւ զարդարեալք, և 'ի մէջ յամենայն կողմանս անկեանց խորհրդաւոր գրեր » ևն։

(Հայաստան լրագիր 1848. Զորրորդ տարի. Թիւ 146.)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բարեյիշատակ Արգոյ Նիկողոս Հովուեան որ իւր ազգասիրութեամբն ու տաղանդովը շատերուն ծանօթ է, և ոչ նուազ աշխատութիւն տուած է Խասգիւղի Ներսէսեան վարժարանի յառաջդիմութեանց համար, և որ վախճանած է 'ի 1853 ին, սա ինքն իւր զարմանալի հանճարով աշխատած է բացատրել այս ծածկագրութիւնները. այլ եթէ ոմանք ըստ ամենայնի գոհացուցիչ չհամարին, պէտք է նկատեն որ ինքն առաջին անգամ բացատրած է զանոնք ժամանակակից պատմութեանց համաձայն, ուստի և ճիշդ կը համարուին ըստ ամենայն հաւանականութեան, քանի որ անոր հակառակը բացատրող մ'ալ չկայ։

Կարելի է առարկել թէ առաջին ծածկագրութեան Ա. իմաստը բռնազբօսեալ է, քանզի անոր սկզբնատառերը պատկերին մէջէն առնուած է, ոչ կարգաւ՝ այլ խառն 'ի խուռն. սակայն քանի որ աղիւսակին ամեն մէկ երեք տառերը առանձինն իրենց բացատրութիւնը, հաշիւն ու իմաստն ունին, յօրինողին համար անկարելի կ'ըլլար Ա. իմաստին սկզբնատառերը կարգաւ շարել և միանգամայն միւս իմաստները հաշուի բերել, ուստի և ստիպուեր է նոյն սկզբնատառերը՝ ցրիւ և յետադաս հաշիւներուն համեմատ զետեղել պատկերին մէջ։

Իսկ երկրորդ ծածկագրութեան բացատրութեանց մէջ «քառասունք» ըսուածը ճիշդ քառասուն օր չպիտի իմացուի (տե՛ս երես 34.), քանզի այն ատեն ի՞նչպէս կարելի է 8 օրուան մէջ «չորրորդ քառասունք»ը վճարել (տե՛ս երես 35.). այլ «քառասունք» ըսելով պէտք է իմացուի սահմանեալ ժամանակ մը աղօթել ինչպէս որ սովորաբար կ'իմացուի այժմ «քառասնից» ըսելով։ Գուցէ այս տեղ «քառասունք»ը՝ որոշեալ

միջոցի մը մէջ 40 անգամ աղօթել նշանակէ, և յայնժամ կարելի է 8 օրուան մէջ լրացնել։ Իսկ եթէ այս դիտողութիւններն ուղիղ չեն, յայնժամ նոյն բացատրութեան Դ. յօդուածին վերջի մասն աւելորդ է։

Փափաքելով յառաջ բերել աստ այն ծածկագիր նուսխային (դեղագրին) օրինակը զոր չէ բացատրեր Ն. Հօփուեան այն պատճառաւ թէ գործածութիւնը մեծ աշխատութեան և ծախքի կարօտ է (տես յեր. 29.) բայց Հայաստան լրագրոյ նշանակեալ թուոյն մէջ այն ծածկագրութիւնը չգտանք. Հետեւաբար նոյն լրագրին միւս թիւերուն մէջ բնտռելով՝ յետագայ մէկ քանի խօսքերը գտանք և զորս կը նշանակեմք աստ, զուցէ ասոնցմէ երրորդն ըլլայ այն նուսխան։ Ասոնց առաջինը բոլոր գրով իսկ միւսները ինչպէս և Նոխմանէջ բառը նոտր գրով գրուած էին. բայց քանզի նոյն ատեն մամուլանոց արձանագրութեանց համար նոտր գրեր չէին գործածուեր, կը կարծուի թէ միւս խօսքերն որոշելու համար՝ հրատարակողը այնպէս նշանակած ըլլայ. քանզի և այս բառերն ալ պարբերութեանց վերջերը գրուած էին՝ իբր ստորագրութիւն։

Պօղոս գրիչ.	'ի Հայաստան	լրագիր.	թիւ	127.
Մխիթար երէց.	»	»	»	149.
Խոջադէկ երէց է տէր.	»	»	»	163.
Իսրայէլ երէց.	»	»	»	172.

Զասոնք բանասէր և հետաքննին ազգայնոց ուշադրութեանը ներկայացընելու առթիւ հարկ է ըսել թէ՝ ես առաւել շնորհակալ պիտի ըլլայինք եթէ բարեյիշատակ Ն. Հօվուեան այն նուսխան ևս բացատրած ըլլար. քանզի վնասը ոչինչ էր կամ նուազ, եթէ այս ներկայ դարուս մէջ գտնուէր ալ մէկը որ մեծ աշխատութեամբ ու ծախքով զանիկայ փորձելու ձեռնարկէր, մինչդեռ խիստ մեծ էր օգուտը, եթէ առով մեր նախնեաց գիտութեան վրայ տեղեկութիւն մը ևս

տառնայինք որուն խիստ պէտք ունիմք ։ Կարծես մեր մատենագրութեան ճակատագիրն է եղած, որ 'ի սկզբանէ և այսր միայն կրօնական ու չոր պատմական տեղեկութիւններէ զատ ամեն ինչ այլ և այլ նկատմամբ իբր աւելորդ համարուին 'ի գիր արձանանալու ։

Ն. Հ. (Նիկողոս Հովուեան) ստորագրութեամբ հետեւեալ արձանագիրը և անոր բացատրութիւնը կու տանք, Մեծ. Աբրահամ Մուրատեանցի խմբագրութեամբ երբեմն 'ի Նիկոմիդիա հրատարակուած Հայբենասէր լրագրոյն մէջ (15 Մայիս 1852. թիւ 49.), և զոր կ'ընդօրինակեմք աստ, բացատրութեանցս հեղինակին սոյնօրինակ գործերը տետրիս մէջ ամփոփելու նպատակաւ, սակայն առանց որոշ գիտնալու թէ արդեօք ի՞նքն յօրինած է, թէ չէ արձանագրութիւն մ'է զոր գտած ու բացատրած է. թէպէտ և առաջին կարծիքը աւելի հաւանական է ։

ԱՐՁԱՆԱԳԻՐ Ի ՄԵԾՆ ՄԵՍՐՈԲ

Շնորհաւք էին Եգէտ հնարեաց Մեսրոբ գիր Հայոց ։

Այս արձանագրութիւնը երեսուն և վեց գրերէ բաղկացեալ է, և բառից նախատառ և վերջատառ գրերուն հաշիւը երեսուն և վեց թիւ կ'ընէ, միայն տառից սկզբնաթիւը հաշուելով առանց գրոյի. զք.

Թիւ սկզբնաչար տառից		Թիւ վերջաչար տառից	
շ	5	ք	9
է	7	ն	4
ե	5	տ	4
հ	7	ց	6
մ	2	բ	2
գ	3	ր	5
հ	7	ց	6
	36		36

Հին դարերու մէջ կարգ մը մարդիկ գիտութեան մենավաճառք՝ իրենց գիտցածները ծածկաբանօրէն կամ այլաբանօրէն իրարու միայն կ՚աւանդէին խորհրդաւոր նշանագրերով։ Այբուբենից գիւտէն յետոյ նոյն տառերը թիւերու և կամ թիւերը տառերու վերածելով տեսակ մը խորհրդաւոր գրութիւն եւս սկսաւ, որ մինչեւ եւրոպական գրականութեան մէջ մուտ գտաւ։ Բայց ծածկագրութիւնք թէ՛ իբր 'ի ցոյց հանճարոյ և թէ՛ աստեղագիտական, գուշակական և հմայական և այլ իրական կամ երեւակայական գիտելեաց համար եւս գործածուելով, և հետզհետէ տգէտներու ձեռօք աղաւաղելով՝ անվերծանելի վիճակի մը հասած է, և խաբեբաներու ձեռքը տեսակ մը գործիք եղած է՝ ժողովուրդը կողոպտելու։

Ծածկաբանութեանց նշանագրի տեսակներուն Հայերէն գրոց մէջ գտնուածներն են սովորաբար՝ Արժ. Գ. Վ. Սրուանձտեանցի հրատարակած Թորոս աղբար անուն գրքին վերջը ցուցուածներն և կամ անոնց նմանները՝ ախտարական գրեանց մէջ։ Տառերով ծածկագրութեան համար, որ հաւանականաբար Արաբացւոցմէ մտած է Հայոց մէջ, շատ յարմարած է Հայոց տառերու 36 թիւը. քանզի յունական և լատինական տառերով եղածներուն վրայ ալ փակագրեր և գլխագրեր աւելցուելով՝ 36 տառի վերածուած են։

Ծածկաբանական գրուածք կը համարուին Նուսխաները, որք սպեղանիի կամ օծանելի և ըմպելի դեղերու դեղագրեր են եղած 'ի սկզբան. և դեռ այսօր տգէտ ամբոխը անոնցմէ բժշկութիւն կը յուսայ, թէ և փոխանակ անոնց պարունակած դեղերուն, (որք եթէ գիտցուին ալ, այսօր ընդհանրապէս կարեւորութիւն մը չունին), նոյն իսկ գրուած թղթիկները (Նուսխէ) ծխելով և կամ անոնց ջուրը խմելով կամ անով օծուելով։

Թըլըսըմները՝ ծածկագրանօրէն գրուած իմաստներ պէտք էին պարունակել․ և շատ հաւանական է թէ առ ան՝ի յափշտակողաց կամ առ ագահութեան գանձ թաղուցանելու և կամ կարեւոր խորհուրդ մը կամ արուեստ մը իբր գաղտնիք մասնաւոր ոմանց միայն իմացընելու համար գործածուած է․ (ինչպէս և ցարդ կը գործածուի այսօրինակ [illegible] մէջ, մանաւանդ հեռագրաց համար) մինչև ցայսօր ևս մանաւանդ արևելցի ռամիկն՝ որ և թէ իրեն անհասկանալի գիր կամ նշանը կը համարի իբր բանալի գաղտնի արուեստի մը կամ թաղուցեալ գանձի մը։ Վերջապարեալ ըսուածն ալ այս տեսակ ծածկագրանական և հաշուական գիտութիւն է եղած երբեմն։

Իսկ հմայքն կը պարունակէ տեսակ մը իմանալի կամ անիմանալի հատուածներ իբր աղօթք կամ սրբազան բանք, և շատ անգամ ալ նուսխայ կամ թըլըսըմ ըսուածները՝ թէ՝ նշանագրերով և թէ՝ տառերով որք ՚ի պահպանութիւն անձին կը պահուին իբր բըժժանք։ Արդեօք սա չէ՞ հմայել կամ հմայք։

Ցերորիս հրատարակման առթիւ այս համառօտ տեսութիւնն ըն[illegible] յետոյ հարկ է ը[illegible]ել [illegible] ներկայ յայտնաբանակ[illegible] մէջ երբ ծրագրն ըն[illegible] [illegible]ուանաւ չպահելու պ[illegible] [illegible]մը մարմնացած է [illegible] բաղդադատ, իրաւ [illegible] որ մարդ[illegible] այլ ևս պէտք չը[illegible] նին ծածկագրութե[illegible] ց[illegible] սակայն անօգ[illegible] չէ [illegible] հետաքննին և հմուտ անձինք ոմանք այս նիւթը [illegible] շաղրութեան առնուն և [illegible] յաջողի[illegible] բացատրել այս տեսակ գրուածները, որով և հին գաղտնեաց վրայ լոյս մը կը սփռեն, ինչպէս շատ մը եւրոպացի գիտնական աշխատած է և [illegible] Հ[illegible] երանի՝ թէ քանի մը կանոն ևս [illegible]ընդէր, ինչպէս [illegible] մէկ երկու նշմար [illegible]ուած է յէջ Գ. 33. 39։

Ե. Մ. Տ.